

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2021 թվականի հուլիսի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ^ա դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր 18 աշակերտները և նրանց ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Գոհար Ղազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Տարեկան գնահատականների, ավարտական ու միասնական քննությունների արդյունքների ամփոփում:
2. Ծնողական և աշակերտական խորհուրդների նախագահների հաշվետվություն:

1.Լսեցին.- Տարեկան գնահատականների, ավարտական ու միասնական քննությունների արդյունքների ամփոփման հարցը:

Դասղեկ Գոհար Ղազարյանը իր խոսքում նշեց, որ 2020-2021 ուստարվա ընթացքում 12-րդ^ա դասարանում աշակերտների թվի փոփոխություն չի եղել: Տարեկան ավարտում եղել են 18 աշակերտ, 2-րդ կիսամյակում աշակերտների թիվը եղել է 19 և 19-ն էլ ավարտել են 12-րդ դասարանը: Տարեկան գնահատականներով դասարանի ուսման առաջադիմությունը կազմում է 100 %:

Այս ուսումնական տարին սկսվեց սեպտեմբերի 15-ին և ավարտվեց հունիսի 5-ին: Աշակերտները դպրոց են եկել խմբերով, շաբաթը 3 օր: Պարապել ենք և՛ առկա, և՛ հեռավար կարգով:

Առաջին կիսամյակում ամփոփվել են որոշ առարկաների արդյունքները: Երկրորդ կիսամյակում շարունակվել են մի քանի առարկաների դասընթացը: Ուսումնական տարվա վերջում հանձնել են միասնական ու ավարտական քննություններ՝ առաջին և երկրորդ փուլերով, ստացել են ատեստատներ: Բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ, և դիմորդներն սպասում են բուհերի ցուցակներին:

Ավարտական դասարանում գերազանցիկ աշակերտ չենք ունեցել, կան 6 հարվածային աշակերտներ (Առաքելյան Մարիամ Աշոտի, Եղիազարյան Քրիստինե Գնելի, Խաչատրյան Մուսաննա Մարգի, Մնացականյան Մարիամ Վաչագանի, Մարգարյան Գեղամ Մարգի, Վարդանյան Մայրանուշ Վանիկի):

Ընդհանուր բացակայությունը կազմում է մոտավորապես 120 դասաժամ, որակական ցուցանիշը 33,3% է:

Ժողովի ընթացքում մանրամասնորեն ներկայացվեցին յուրաքանչյուր աշակերտի տարեկան ու քննական գնահատականների ամփոփագիրը և բացակայությունը: Ամփոփիչ ձևով տեղեկացվեցին նաև բոլոր քննությունների արդյունքները:

Դրվատանքի ու գովեստի խոսքեր ասվեցին քննություններին լավ նախապատրաստված աշակերտների հասցեին, որոնք պատասխանատվության զգացումով հանձնեցին ավարտական բոլոր քննությունները:

Քննություններն սկսվեցին ու ավարտվեցին ժամանակին, և դասարանի բոլոր աշակերտները ավարտեցին դպրոցը:

Քննություններից հետո առանց կորուստների և մաքուր վիճակով հավաքագրե-

ցին ու հանձնեցին բոլոր դասագրքերը:

Դրական գնահատվեց նաև ավագներ Մայրանուշ Վարդանյանի ու Գեղամ Սարգսյանի կատարած աշխատանքը: Նրանք մեծ պատասխանատվությամբ են կատարել իրենց վրա դրված պարտականությունները՝ հետևելով դասարանի մաքրության, հերթապահության կատարման, գույքի, դասագրքերի և օրագրերի պահպանման, հաճախումների հաշվառման և դպրոցի բակում ծառատնկման աշխատանքներին:

Դասարանի աշակերտները դասղեկի գլխավորությամբ բարձր մակարդակով կազմակերպել ու անցկացրել են նաև «ՎԵՐՁԻՆ ՋԱՆԳ» և «ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ» համադպրոցական միջոցառումները ծնողների մասնակցությամբ:

Մասնակցել են նաև ինչպես դպրոցական, այնպես էլ տարածաշրջանային, մարզային ու հանրապետական մրցույթ-օլիմպիադաների և արժանացել պատվոգրերի ու մրցանակների:

«Դասղեկի ժամ»-երի ընթացքում լավել են զրույց-գեկուցումներ, քննարկվել բազմաթիվ հարցեր, որոնք նպաստել են ուսման առաջադիմության և աշակերտների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը:

Որոշեցին

Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած տարեկան գնահատականների ու ավարտական քննությունների ամփոփիչ արդյունքները, 2020-2021 ուստարում կատարված աշխատանքները, շնորհավորել աշակերտներին՝ դպրոցն ավարտելու կապակցությամբ:

2.Լսեցին.- Մտողական և աշակերտական խորհուրդների նախագահների հաշվետվության հարցը:

Մտողական խորհրդի նախագահ Թագուհի Մկրտչյան խոսեց ծնողկոմիտեի, իսկ աշակերտական խորհրդի նախագահ Քրիստինե Եղիազարյանը՝ աշակերտական խորհրդի կատարած աշխատանքների մասին:

Որոշեցին

Ե՛վ ծնողական, և՛ աշակերտական խորհուրդների նախագահների կատարած աշխատանքները գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝
Քարտուղար՝

Թ. Մկրտչյան

Լ. Հովհաննիսյան